

29. Վարչական իրավախախտումներ

29.2. *Գրանցված վարչական իրավախախտումների քանակական վերլուծություն:*

Ճանապարհատրանսպորտային տնտեսության և կապի բնագավառներում բացահայտված իրավախախտումների 46.5%-ը կամ 69.4 հազ. դեպք վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներն են, տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտումները կազմել են 37.9% կամ 56.5 հազ. դեպք: 10.7 հազարը (7.2%) վարորդների կողմից առանց վարորդական վկայականի կամ այլ փաստաթղթերի տրանսպորտային միջոցներ վարելու դեպքերն են, 5.7 հազարը (3.8%)՝ վարորդների կողմից հարբած կամ թմրամիջոցներ օգտագործած վիճակում տրանսպորտային միջոցներ վարելու դեպքերը: Ճանապարհատրանսպորտային տնտեսության և կապի բնագավառներում վարչական իրավախախտումները 1000 բնակչի հաշվով կազմել են 46.5 դեպք:

Վարչական իրավախախտումների 7.3%-ը (15.8 հազ. դեպք) արձանագրվել է առևտրի, ֆինանսների և տնայնագործական արհեստներով զբաղվելու բնագավառում: Դրանց 41.4%-ը (6.5 հազ.) վերաբերվում է եկամուտների հաշվառում չվարելուն կամ սահմանված կարգի կոպիտ խախտմամբ հաշվառում վարելուն, 24.8%-ը (3.9 հազ.)՝ եկամուտների մասին հայտագիր ներկայացնելուց խուսափելուն կամ ժամանակին չներկայացնելուն կամ հայտագրի մեջ ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելուն, 7.8%-ը (1.2 հազ.)՝ առանց պետական գրանցման կամ առանց լիցենզիայի, լիզենզավորման ենթակա կամ հատկապես արգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքերն են: 1000 բնակչի հաշվով այդ բնագավառում վարչական իրավախախտումները կազմել են 4.9 դեպք:

Վարչական իրավախախտումների 7.5%-ը (16.2 հազ. դեպք) արձանագրվել է կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգություն անելու բնագավառում, որոնց 39.0%-ը (6.3 հազ.)՝ հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու, 37.0%-ը (6.0 հազ.)՝ անձնագիրը դիտավորությամբ փչացնելու կամ այն անփութորեն կորցնելու, 8.5%-ը (1.4 հազ.)՝ ոստիկանության աշխատողի օրինական կարգադրությանը կամ պահանջին չարամտորեն չենթարկվելու, 4.1%-ը (0.7 հազ.)՝ ըստ որակի, կոմպլեկտայնության և փաթեթավորման ստանդարտների, տեխնիկական պայմանների և նմուշների պահանջներին չհամապատասխանող արտադրանքը վաճառքի հանելու դեպքեր են: 1000 բնակչի հաշվով այդ բնագավառում վարչական իրավախախտումների դեպքերը կազմել են 5.1:

2002թ. քաղաքացիների իրավունքների և բնակչության առողջության դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների քանակը կազմել է 4.3 հազ. դեպք, որի 89.3%-ը (3.9 հազ.) բաժին է ընկնել սանիտարահիգիենիկ և սանիտարահակահամաճարակային կանոնների և նորմաների խախտումներին, 9.7%-ը (0.4 հազ.)՝ ապօրինաբար ոչ խոշոր չափերով թմրամիջոցներ ձեռքբերելու կամ պահելու կամ առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ գործածելուն: 1000 բնակչի հաշվով այդ բնագավառի վարչական իրավախախտումները կազմել են 1.3 դեպք:

Հասարակական կարգի դեմ ոտնձգվող իրավախախտումների 2.8 հազ. դեպքի 78.7%-ը (2.2 հազ.) կազմել են մանր խուլիգանության դեպքերը: 1000 բնակչի հաշվով հասարակական կարգի դեմ ոտնձգվող իրավախախտումները կազմել են 0.8 դեպք:

Շրջակա բնական միջավայրի, պատմության և մշակույթի հուշարձանների բնագավառներում հայտնաբերված վարչական իրավախախտումները 2002թ. կազմել են 1812

դեպք, որոնց 30.8%-ը՝ անտառատնկարաններում և տնկադաշտերում ծառերն ու թփերն ապօրինաբար կտրելու և վնասելու, 16.3%-ը՝ մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների գերազանցման, 10.0%-ը՝ ջրային ռեսուրսների պահպանության կանոնները խախտելու, 6.2%-ը՝ անտառհատման ֆոնդի օգտագործման սահմանված կարգը խախտելու դեպքերն են: 1000 բնակչի հաշվով այդ բնագավառում արձանագրված դեպքերի քանակը կազմել է 0.6:

2002թ. բնակարանային-կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում արձանագրված վարչական իրավախախտումները կազմել են 1.0 հազ. դեպք, որոնց 24.1%-ը՝ տարածքների բարեկարգման, 11.8%-ը՝ բնակելի տներ, կցաշենքեր, ավտոտնակներ և այլ տնտեսական ու կենցաղային շինություններ ինքնակամ կառուցելու կանոնները խախտելու դեպքերն են: 1000 բնակչի հաշվով այդ բնագավառում արձանագրված դեպքերի քանակը կազմել է 0.3:

Ձինվորական հաշվառման բնագավառում արձանագրվել է 859 վարչական իրավախախտումների դեպք: 1000 բնակչի հաշվով այդ բնագավառում արձանագրված դեպքերի քանակը կազմել է 0.3:

Մաքսանենգության և մաքսային կանոնների խախտման բնագավառում մաքսային գործերը քննող մարմինների կողմից հայտնաբերվել է 509 վարչական իրավախախտումների դեպք: 1000 բնակչի հաշվով արձանագրված դեպքերի քանակը կազմել է 0.2: